ՄԵԼԱՆՅԱ ԲԱԼԱՅԱՆ

ԱՀ Մշակույթի, երիտասարդության հարցերի և զբոսաշրջության նախարարի տեղակալ

ԼՂԻՄ-ՈՒՄ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՆԿԱՏՄԱՄԲ 1920-30-ԱԿԱՆ ԹԹ. ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Բանալի բառեր՝ *Ղարաբաղ, Հայաստան, խորհրդային, ազգային, հոգևորականություն, եկեղեցի, առաքելական, Ադրբեջան, գաղափարախոսություն, քաղաքականություն:*

Խորհրդային կարգերի հաստատումը տարածաշրջանում, նաև Հայաստանում և մասնավորաբար Լեռնային Ղարաբաղում, կործանարար հետևանքներ ունեցավ ինչպես տարածքային, այնպես էլ ազգային մշակույթի տեսանկյունից: Ակնհայտ իրողություն է, որ Հայոց ազգային պետականության բացակայության պայմաններում ընդհուպ մինչև 1918-1920 թթ. ազգային մշակույթի և կրթության կրողն ու հովանավորը հիմնականում Հայ առաքելական եկեղեցին էր: Սակայն խորհրդային կարգերի հաստատումից հետո կոմունիստական կուսակցության ապազգային գաղափարախոսության տարածման ու ամրապնդման համատեքստում, եկեղեցին սկսեց դիտվել որպես ազգայնական հաստատություն, հետևաբար և խորհրդային համակարգին ոչ հարիր: Պաշտոնապես ճանաչելով պետությունից եկեղեցու անկախ լինելու փաստը, կոմունիստական կուսակցությունն իրականում ակտիվ գործունեություն ծավալեց նրա խպառ վերացման ուղղությամբ:

Արդարությանը տուրք տալով, հարկ է ընդգծել, որ, ընդհանուր առմամբ, ողջ խորհրդային տարածքում էր ծավալվել հակակրոնական քարոզչություն: Սակայն այն միանգամայն տարբեր մասշտաբներով ու մեթոդներով է իրականացվել խորհրդային երկրի տարբեր հատվածներում, ինչը, բնականաբար, պայմանավորված էր առավելապես էթնոքաղաքական հանգամանքներով: Խորհրդային Ադրբեջանի տիրապետության տակ հայտնված և 95 տոկոս հայ ազգաբնակչություն ունեցող Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում, ինչպես նաև ինքնավար մարզի սահմաններից ակնհայտ պատճառներով դուրս թողնված և Ադրբեջանի Խորհրդային Հանրապետության կազմում ներառված հայկական

մյուս բնակավայրերում հիշյալ քաղաքականությունն իրականացվեց առանձնակի նպատակայնությամբ ու դաժանությամբ: Խնդիրն այն էր, որ Թուրքիայի պահանջով, ապօրինաբար խորհրդային Ադրբեջանին բռնակցված հայկական ու հայաբնակ տարածքներում Հայ առաքելական եկեղեցին միաժամանակ դիտվում էր որպես հակաադրբեջանական շարժման կենտրոն ու քարոզիչ:

Տեսակետը հիմնավոր ներկայացնելու համար փորձենք որոշ զուգահեռներ անցկացնել Ադրբեջանի կազմում հայտնված հայկական տարածքներում և ՀԽՍՀ-ում Հայ առաքելական եկեղեցու նկատմամբ իրականացված քաղաքականության, ինչպես նաև հենց Լեռնային Ղարաբաղում առկա մահմեդական շինությունների առնչությամբ:

Ամենաակնառու փաստն այն է, որ Լեռնային Ղարաբաղում Հայ առաքելական եկեղեցու նկատմամբ Խորհրդային Ադրբեջանի իրականացրած քաղաքականության հետևանքով եկրամասը դարձավ միակ հայաբնակ տարածքը, որտեղ 1930-ական թվականներից ոչ միայն գոյություն չուներ որևէ գործող եկեղեցի, այլև աննկարագրելի եռանդով ոչնչացվում էին եկեղեցիներն ու վանքերը, իսկ գույքը՝ թալանվում: Իրագործվող նպատակային քաղաքականության հետևանքով, ի տարբերություն մահմեդական շինությունների, Լեռնային Ղարաբաղի տարածքում ընդհուպ մինչև XX դարը գոյատևած հազարավոր եկեղեցիներ ու վանքեր հիմնահատակ ավերվեցին:

Հայ եկեղեցու պատմության «Վավերագրերում» բազմաթիվ վկայություններ կան եկեղեցու և հոգևորականության դեմ իրականացված բռնարարքների ու թալանի, նաև այդ բռնարարքների դեմն առնելու նպատակով Ամենայն հայոց կաթողիկոսության կողմից ձեռնարկված քայլերի մասին: Այսպես. 1926 թ. էջմիածնի Գերագույն հոգևոր խորհուրդը գրություն ուղարկեց ԼՂԻՄ ժողկոմխորհի նախագահ Արմենակ Ղարագյոզյանին՝ «Արցախի գիւղերում կուսակցական գործիչների և իշխանութեան ներկայացուցիչների հակաեկեղեցական տգեղ ու պատիւ չբերող պահուածքի դէմն առնելու խնդրանքով»[1], որտեղ փաստերով ներկայացված է, որ Խորհրդային Ղարաբաղում 20-ից ավելի գյուղական եկեղեցիներ փակելուց, դրանք թատրոնի ու ակումբի վերածելուց զատ, իշխանության ներկայացուցիչները և կուսակցական գործիչները կոպիտ բռնություններով ու անվայելուչ արարքներով վիրավորում են գյուղի հավատացյալ բնակչության կրոնական սրբություններն ու զգացումները[2]: Սույն գրությունը ևս մեկ վկայություն է, որ Հայոց հոգևոր կենտրոն էջմիածնի կողմից միջոցներ են ձեռնարկվել

---

[1] Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան, գիրք Թ, *Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմը (1813-1933)*, Երևան, 2001, էջ 828:

[2] **Մ. Բալայան**, *Արցախի պետական պատմաերկրագիտական թանգարանի եկեղեցական մասունքները*, Երևան, 2009, էջ 3:

ԼՂԻՄ-ում փոքր-ինչ մեղմելու Հայ առաքելական եկեղեցու նկատմամբ իրականացվող բռնարարքները, թեկուզև այդ միջամտությունն էլ ակնհայտորեն ի զորու չէր կանխելու Ադրբեջանի որդեգրած հայ եկեղեցու իսպառ ոչնչացման նպատակային քաղաքականությունը:

Արցախի թեմի առաջնորդ Վրթանես վարդապետը, որ նշանակման պահից ի վեր ակտիվ գործունեություն էր ծավալել եկեղեցում տիրող իրավիճակը բարեկարգելու ուղղությամբ, այնուամենայնիվ ստիպված էր Շուշիից տեղափոխվել Գանձասար, որպես համեմատաբար ապահով վայր: Սակայն բազմաթիվ փաստեր վկայում են, որ եկեղեցին ԼՂԻՄ-ում ամենուրեք բացահայտորեն գտնվում էր ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատի խիստ վերահսկողության տակ[3]:

Ադրբեջանի կոմկուսի հատուկ հրահանգներով սկսվեց եկեղեցիների գույքի աննախադեպ թալան ու բռնագրավում: Առանձնապես սահմռկեցուցիչ են ժամանակի մամուլում տեղ գտած հրապարակումների տվյալները, որտեղ բացահայտ հպարտությամբ են նկարագրված եկեղեցիները փակելու, հոգևորականությանը նվաստացնելու փաստերը:

ԼՂԻՄ-ում 1929 թվականից սկսած՝ «Խորհրդային Ղարաբաղ» թերթի հատուկ հավելված էր հրատարակվում՝ «Անաստված» խորագրով:

Առաջին իսկ համարում հստակ ներկայացվել է նպատակը, որ հետևյալն էր. «Պետք է ուժեղացնել հակակրոնական աշխատանքները» խորագրով հոդվածը յուրատեսակ կոչ էր՝ ուղղված ԼՂԻՄ բոլոր բնակավայրերին. «Մեր բոլոր աշխատակիցներին, գյուղթղթակիցներին և «անաստվածների» խմբակներին խնդրում ենք ուղարկել մեզ տպագրության համար նյութեր և հոդվածներ հակակրոնական աշխատանքների մասին, հակակրոնական մանր պատմվածքներ, բանաստեղծություններ, ժողովրդի կողմից պատմվող ավանդություններ (սրբատեղիներին և կղերականներին վերաբերող), առածներ, առակներ և այլն:

Խմբագրական»[4]:

Փաստորեն «Ադրբեջանի կոմունիստական կուսակցության Ղարաբաղի **մարզային** կոմիտեի և կենտգործկոմի օրգան» համարվող մամուլը նպատակաուղղված էր Հայ առաքելական եկեղեցու դեմ տարվող քաղաքականության քարոզչությանը և ակնհայտորեն խրախուսվում էր այդ ուղղությամբ իրականացվող յուրաքանչյուր ձեռնարկ: Տեսակետը հիմնավորող փաստերը բազմաթիվ են: Այսպես. «Տարեցտարի մեր աշխատավորության լայն մասսաներն ավելի յեն ուժեղացնում իրենց պայքարը հին, փտած, գիտակցությունը մթագնող կրոնի դեմ:

---

[3] *Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան*, գիրք Թ, էջ 866-867: Տե՛ս նաև **Մ. Բալայան**, *Հայ Աղվանից եկեղեցին (սկզբնավորումից մինչև մեր օրերը)*, Ստեփանակերտ, 2009, էջ 211:

[4] *Խորհրդային Ղարաբաղ*, 2 փետրվարի, Հավելված *Անաստված*, 1929:

Այս պայքարն ավելի վճռական կերպով է հանդես գալիս յեկեղեցիներն ակումբների ու այլ հասարակական պետքերին բավարարող շենքերի վերածելու գործում: Այսպես օրինակ Ի. Լ. Ղարաբաղի սահմաններում ա) Դիզակի ռայոնը վերացրել է 20 յեկեղեցի, վորից 6-ը փոխարկել է ակումբների, 12-ը՝ խրճիթ-ընթերցարանների, մեկը՝ դպրոցի և մեկն՝ այլ պետքերի, բ) Մարտունու ռայոնը վերացրել է 23 յեկեղեցի, սրանցից 4-ը փոխարկել է ակումբների, 18-ը՝ խրճիթ-ընթերցարանների, մեկը՝ դպրոցի, գ) Ստեփանակերտի ռայոնը վերացրել է 17 յեկեղեցի, (սրանց թվումն են Ստեփանակերտի յերկու յեկեղեցիները), սրանցից հինգը փոխարկված է ակումբների, 11-ը՝ խրճիթ-ընթերցարանների, 1-ը՝ դպրոցի, դ) Ջրաբերդի ռայոնը վերացրել է 18 յեկեղեցի, վորոնցից մեկը փոխարկված է ակումբի, 16-ը՝ խրճիթ-ընթերցարանների, իսկ մեկը՝ այլ պետքերի և յե) Շուշվա ռայոնը վերացրել է մեկ յեկեղեցի, ինչն և փոխարկել է ակումբի»: Իսկ հոդվածը եզրափակվում է հետևյալ նախադասությամբ. «լիահույս ենք, վոր Ադրբեջանի խորհրդայնացման տասերորդ տարեդարձին նա (աշխատավորությունը) և վոչ մի հատ յեկեղեցի չի թողնի Ի. Լ. Ղարաբաղի սահմաններում»[5]:

Տարվող քաղաքականության հստակ խոստովանություն, որ նաև Ադրբեջանին ներկայացվող հաշվետվություն էր: 1929 թ. փետրվարի 21-ին Ադրբեջանի նախարարների խորհրդի որոշման հիման վրա ԼՂԻՄ-ում ձեռնարկվեց 108 եկեղեցիների փակման գործը՝ դրանք վերածելով «կուլտուր-լուսավորական հիմնարկությունների»[6]: 1929 թ. հոկտեմբերի 4-ին մարզգործկոմի որոշմամբ փակվեց Ամարասի հռչակավոր եկեղեցին, իսկ եկեղեցական մասունքները ուղարկվեցին Բաքու՝ «ուսումնասիրելու նպատակով»: Միանգամայն կեղծ մեղադրանքով 1929 թ. ձերբակալվեց Ղարաբաղի թեմի առաջնորդ Վրթանես եպիսկոպոսը[7]: Ընդգծենք, որ բազմաթիվ բողոք-նամակները ԼՂԻՄ- ում հայ հոգևորականության ու եկեղեցու նկատմամբ նույնիսկ քննարկման առարկա էին դարձել ՀԿ(բ)Կ Կենտկոմում: Քննարկելով Հայ առաքելական եկեղեցու նկատմամբ իրականացվող քաղաքականությունը, ՀԿ(բ)Կ Կենտկոմը 1929 թ. ապրիլի 9-ին հատուկ նամակով դիմել է ԼՂԻՄ մարզային կոմիտեին, որտեղ մասնավորապես նշված էր. «Եկեղեցիների փակումը վարչական կարգով հանդիսանում է քաղաքական կոպիտ սխալ: Պետք է շեշտել, որ հիմնականում սխալ է այն տեսակետը, թե նույնիսկ որոշ դաստիարակչական աշխատանքից հետո ներկայումս հնարավոր է եկեղեցիների մասսայական փակումը գյուղական շրջաններում: Կենտրո-

---

[5] Նույն տեղում:

[6] ԼՂՀ պետարխիվ, ֆ.1, ց.2, գ.3, թ. 63: Տե՛ս նաև՝ **Մ. Բալայան**, *Արցախի պետական պատմա-երկրագիտական...*, էջ 5:

[7] **Մ. Բալայան**, *Հայ Աղվանից եկեղեցին...* էջ 213:

նական կոմիտեն հրավիրում է վճռականորեն վերացնել հակակրոնական պայքարի տակ կատարվող այս «քյալագյոզական» քայլերը»[8]*: Եվ այնուհանդերձ, ՀԿ(բ)Կ Կենտկոմի նամակն էլ ի զորու չէր անգամ մեղմելու Ադրբեջանի որդեգրած քաղաքականությունը Հայ առաքելական եկեղեցին մեկընդմիշտ վերացնելու նպատակադրված քաղաքականությունը:*

Ղարաբաղի հոգևոր ոլորտում տիրող իրավիճակի մասին 1932 թ. թեմական առաջնորդը զեկուցագիր է ուղարկել Էջմիածնի Գերագույն հոգևոր խորհրդին, մասնավորապես ներկայացնելով, որ «մինչև 1930 թվի փետրուար ամիսը թեմումս գոյութիւն ունէին եկեղեցիներ, թեմական խորհուրդ, քահանայութիւն, ներկայումս թեմիս բոլոր եկեղեցիները վեր են ածուած դպրոցական, հասարակական, այլև այլ հաստատությունների: Ներկայումս թեմիս բոլոր քահանաները առանց բացառութեան հրաժարուել են, է՝ որ իրենց կոչումից, և է՝, քահանահագործունեթիւնից...»[9]*:*

Հակաքրիստոնեական ակտիվ քարոզչության և այդ ուղղությամբ ծավալված աշխատանքների մրցակցության մասին են փաստում «Խորհրդային Ղարաբաղ» թերթի «Անաստված» հավելվածի առանց բացառության բոլոր համարներում տեղ գտած հոդվածները, որոնցում մեկառմեկ ներկայացված են առանձին գյուղերում եկեղեցիները փակելու, հոգևորականությանը վտարելու, նվաստացնելու վերաբերյալ նյութերը: Դրանք փաստում են նաև, որ հակաքրիստոնեական, հակակրոնական աշխատանքները մարզի բոլոր հայաբնակ բնակավայրերում եղել են հատուկ ուշադրության կենտրոնում և միաժամանակ իրականացվել են տարբեր մեթոդներով՝ եկեղեցու վերակառուցումը ակումբի կամ դպրոցի և կամ իսպառ քանդումն ու շինանյութի օգտագործումը տարաբնույթ նպատակներով:

Հիմնախնդիրը գերազանցապես ներկայացվում է որպես ԽՍՀՄ կոմունիստական կուսակցության կողմից իրականացված աթեիստական քաղաքականության արդյունք: Սակայն, կրոնական հալածանքներն ու հոգևոր շինությունների ավերման փաստերն ակնհայտորեն վերաբերում են ԼՂԻՄ-ի և նպատակային նրա կազմից դուրս թողնված ու Խորհրդային Ադրբեջանին բռնակցված հայաբնակ մյուս վայրերի բացառապես քրիստոնյա հոգևորականությանն ու քրիստոնեական հուշարձաններին, մի իրողություն, որ իրականացվում էր Ադրբեջանի կոմկուսի անմիջական հրահանգներով ու հսկողությամբ: Նշված տարածքներում պահպանվել և մինչև այսօր էլ կանգուն են մահմեդական հուշարձանները[10]*, իսկ քրիստոնեականը՝ հիմնական մասով ոչնչացված: Տեսակետի հստակ*

---

8 ՀՀ ՔԿՓՊԱ, ֆ. 19, գ.2, 4, ց. 97, թ. 43:

9 *Վաւերագրեր Հայ եկեղեցու պատմութեան*, գիրք Թ, էջ 896:

10 **Ս. Կարապետյան**, *Արցախի մահմեդական հուշարձանները*, Երևան, 2010:

փաստարկներից է Աղդամում, Շուշիում առկա մահմեդական բոլոր շինությունների պահպանումը: Ս. Կարապետյանը հնարավոր ջանասիրությամբ ուսումնասիրել է ինչպես բուն Արցախի, այնպես էլ Խորհրդային Ադրբեջանին բռնակցված տարածքների մինչև 1980-ական թվականները պահպանված քրիստոնեական հուշարձաններն ու հանրության դատին ներկայացրել վանդալիզմի այն քաղաքականությունը, որ իրականացրել է Ադրբեջանը 1920-ական թվականներից ի վեր: Ս. Կարապետյանի՝ վերջերս հրատարակած փաստագրական արժեքավոր ուսումնասիրություններից մեկն էլ իրավացիորեն վերնագրված է «Ադրբեջանը քաղաքակրթությունից դուրս» (Երևան, 2017):

Հայկական պատմական, իր հիմքով քրիստոնեական մշակույթի լայնամասշտաբ ոչնչացման քաղաքականությանը հաջորդեց նաև այն «սեփականաշնորհելու» գործընթացը, որին ձեռնամուխ եղան 1970-ական թվականներից, երբ թուրք-ադրբեջանցի «գիտնականները» Հայոց արևելից կողմերում դեռևս պահպանված քրիստոնեական հուշարձանները հռչակեցին «աղվանական», իսկ իրենց՝ «աղվանների հետնորդներ»: Եվ այնուհանդերձ, այս հանգամանքն էլ չխանգարեց նրանց՝ շարունակելու համար տվյալ դեպքում «իրենց սեփական մշակույթի» ոչնչացման քաղաքականությունը: 1989 թվականից ի վեր ոչնչացվեցին մեր հայրենիքի իրենց վերահսկողության տակ մնացած տարածքներում տակավին հրաշքով պահպանվող եկեղեցիները, վանքերն ու խաչքարերը:

Տարաբնույթ վավերագրեր փաստում են, որ Խորհրդային Ադրբեջանին բռնակցված ԼՂԻՄ-ում և ՀԽՍՀ-ում Հայ առաքելական եկեղեցին իրականության մեջ հայտնվել էր իրավաքաղաքական միանգամայն տարբեր իրավիճակներում:

1924 թվականից Երևանում հրատարակվող «Ազատ Յեկեղեցի» կրոնա-բարոյական և պատմագրական շաբաթաթերթը նույնպես բազմաթիվ տեղեկություններ է հաղորդում Ղարաբաղում հայ եկեղեցիներն ու վանքերը ոչնչացնելու և զուգահեռաբար՝ ՀԽՍՀ-ում եկեղեցու բարեփոխմանն, ինչպես նաև դրա վերանորոգմանն ուղղված ձեռնարկների մասին: Այսպես. շաբաթաթերթի 1928 թ. 1-4 համարի բովանդակությունը, մասնավորապես «Գյանջայ գավառից. ՍԱՐՍԱՓ» խորագրով լրատվությունը, ինքնին վկայում է Գանձակում տվյալ ժամանակներում տիրող մռայլ իրավիճակի մասին: Զուգահեռաբար տեղեկություններ են զետեղված ՀԽՍՀ-ում եկեղեցիների վերանորոգման փաստերի վերաբերյալ՝ ինչպես օրինակ, 1926 թ. Լենինականի երկրաշարժի հետևանքով վնասված եկեղեցիները, Էջմիածնի նախաձեռնությամբ՝ Եգիպտոսի և հայկական այլ գաղթօջախների կողմից տրամադրված միջոցների շնորհիվ, վերանորոգվել են[11]*: Նման օրինակները բազմաթիվ են:*

---

[11] *Ազատ Յեկեղեցի շաբաթաթերթ*, 5-6 մարտ, 1928:

Այսպիսով, խորհրդային ժամանակահատվածում, հատկապես 1920-1930-ական թվականներին, Ադրբեջանի իշխանությունների կողմից ամեն ինչ արվեց Արցախի հայության հոգևոր մշակութային զարկերակը կաթվածահար անելու համար, որի հետևանքով էլ Արցախը զրկվեց իր դարավոր ազգային հաստատությունից: «Անցնող յուրաքանչյուր տարվա հետ ավերվող հուշարձանների թիվն ավելի է մեծացել, իսկ աշխարհագրական ընդգրկումը ընդարձակվել: ... Ոչնչացող հայկական հուշարձանների շարքում առաջին տեղը բռնում էին հայերեն արձանագրություններն ու խաչքարերը, ապա վանքերն ու եկեղեցիները, այլ կերպ ասած, մշակույթի ակնհայտ քրիստոնեական շերտը»[12]:

MELANYA BALAYAN

AZERBAIJAN'S POLICY AGAINST THE ARMENIAN APOSTHOLIC CHURCH IN NKAO (1920–1930s) AND ITS CONSEQUENCES

Keywords: Karabakh, Armenia, Soviet, national, clergy, church, Apostolic, ideology, Azerbaijan, policy.

The policy of atheism, adopted by the Communist Party in the Soviet era, manifested itself in a rather different manner and scope in NKAO and other Armenian-populated areas intentionally annexed to Soviet Azerbaijan. Religious persecutions were perpetrated exclusively against the Christian clergy, churches and other Christian monuments were destroyed. This was carried out by the direct order of the Communist Party of Azerbaijan and under its supervision. In many places, Muslim monuments exist to this day while Christian ones have mostly disappeared. This clearly indicates that "atheism" was merely a pretext for realizing the policy of Turkey aimed at the final appropriation of captured Armenian territories.

[12] **Ս. Կարապետյան**, «Հայկական հուշարձանների եղեռնը Ադրբեջանում», *Հայոց ցեղասպանություն, ուսումնասիրություններ*, Երևան, 2001, էջ 213:

МЕЛАНЯ БАЛАЯН

ПОЛИТИКА АЗЕРБАЙДЖАНА В ОТНОШЕНИИ АРМЯНСКОЙ АПОСТОЛЬСКОЙ ЦЕРКВИ НКАО (1920-1930-ЫЕ ГГ.) И ЕЕ ПОСЛЕДСТВИЯ

Ключевые слова: Карабах, Армения, советский, национальный, апостольский, духовенство, церковь, Азербайджан, идеология, политика.

Политика атеизма, принятая Коммунистической партией в советский период, имела разные масштабы и проявления во включенной в состав советского Азербайджана НКАО и в других населенных армянами населеннных пунктах, целенаправленно аннексированных Азербайджаном. Религиозные преследования и разрушения зданий духовного значения применялись исключительно по отношению к христианскому духовенству и христианским памятникам. Все это исполнялось по приказу компартии Азербайджана и непосредственно под ее контролем. В упомянутых местах по сей день стоят мусульманские памятники, в то время как основная часть христианских была разрушена. Все это четко свидетельствует о том, что “атеизм” был всего лишь предлогом на пути турецкого плана по присвоению захваченных армянских земель.